



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



Կազմեց Ա. ԱՔԱՆԱՍԹԱՆ  
(Ըստ ՊԱՐՖԻԼՈՎԻ)


### 1. ԱՐԵՎԱԾԱՂԻԿՆ ՈՒ ՆՐԱ ՄՇԱԿՈՒՅՅԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ

Արևածաղիկը, կամ, ինչպես ժողովուրդը մեզնում ասում է, սեմուշկան, Հայաստանում մշակվող կուտուրական բույսերից, համեմատաբար, ավելի նորամուտ բույս է: Նրան բերել են մեզ մոտ Ռուսաստանից ոռոս գաղթական— աղանդավորները անցյալ դարի հիսունական թվականներում և ցրել են գլխավորաբար մեր լեռնային խոնավ շրջաններում՝ Լոռում, Դիլիջանում, Ախտալում և Ծաղկաձորում: Դրանցից միայն Լոռումն է, ուր արևածաղիկը մշակվում է դաշտերում, մնացյալ տեղերում նա ցանվում է կամ տներին կից հողաբաժիններում և կամ բանջարանոցներում— և այն ել վոչ թե նրանից յուզ ստանալու համար, այլ չրթելու և ուտելու համար:

Յեթե ի մի ժողովենք Հայաստանում ցաք ու ցրիվ մշակվող այդ բույսի բնած տարածությունը, նա 250—260 հեկտարից չի անցնիլ— և այն գլխավորապես Լոռում, ուր  $\frac{1}{3}$ ,  $\frac{1}{4}$  հեկտարանոց արտեր կան, ուր ցանվում է արևածաղիկը:

Ռուսաստանում, Ուկրայինայում և Հուսիսային Կովկասում՝ հատկապես Կուբանի շրջանում արևածաղիկը դաշտում բնում է ահադին տարածություն, վորով նա


Главлит № А—89.161      Заказ № 413      Тираж 6.000 экз.  
Книжная ф-ка Центриздата Народов СССР. Москва,  
Шлюзовая набережная, 10.



15498-521

դառնում է այդ յերկրների՝ հարավային տաք շրջանների ամենից տարածված յուղաբույսը, վորից ստացվում է 20 հազար տոննա շատ համեղ յուղ և կրկնակի քանակով սննդարար քուսպ:

Ներկայումս, յերբ մենք բուսական յուղերի և դրանից ստացվող քուսպի հսկայական պահանջ ունենք, Հայաստանի մի քանի շրջանների համար արևածաղիկը մոտ տարիներում դառնալու յե արդեն դաշտային բույս: Մեր



Նկ. 1. Արևածաղկի գլուխները:

հնգամյա հեռանկարային պլանով արևածաղիկը բռնելու յե ըստ տարիների հետևյալ տարածությունը և տալու յե մեղ հետևյալ բերքը հեկտարից ցենտներներով:

Թիվ	Հեկտար	Բերք մի հեկտարից
1929	280	9,5.
1930	320	10,0
1931	500	10,0
1932	600	12,0
1933	800	14,0

## 2. ԱՐԵՎԱԾԱՂԿԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Արևածաղիկը Յեվրոպա յե բերված Հյուսիսային Ամերիկայից, վորտեղից նա մտել է Ռուսաստան, իսկ այդտեղից Անդրկովկաս և Հայաստան:

Նա յուղատու բույսերի մեջ բռնում է առաջին տեղերից մեկը և պարունակում է իր հատիկների մեջ 25—26% յուղ, վորը համարվում է ամենից համեղ բուսական յուղերից մեկը: Լինելով տաք յերկրների բույս, նա սերմի բուսած որից մինչև հասնելը պահանջում է 105—120 որ կամ  $3\frac{1}{2}$ —4 ամիս: Նա աշող բսնում է, յերբ ամառվա ամիսները լինում են շատ տաք և որերի ջերմության ընդհանուր գումարը—ծլելուց մինչև քաղը— հավասար է լինում 2600—2800 աստիճանի:

Գալով բերքին, լավ մշակության պայմաններում մի հեկտարը տալիս է 20—25 ցենտներ կամ 120—150 փութ սերմ:

Արևածաղկի մյուս առավելությունը կայանում է նրանում, վոր նա իր ուժեղ և խորը քնացող արմատներով իրեն անհրաժեշտ խոնավությունը դուրս է բերում հողի ստորին շերտերից: Գրա համար էլ չոր և անջրտի տեղերում նրա մշակությունը և ստացվող միջին բերքը ապահովված է համարվում:

Մի ուրիշ առավելություն էլ ունի արևածաղկի մշակությունը. դա նա յե, վոր յերբ նրա բերքը ժողովում ենք, կտրելով գլուխները և թողնելով դաշտում նրա ցից-ցից հաստ ցողունները, ձմեռը այդ ցողունները չեն

թողնում, վոր քամին յեկած ձյունը քշի, տանի ուրիշ տեղեր, այլ ձյունը մնում է արևածաղկի արտերի մեջ մեծ շերտերով և դրանով նա ձյունահավաք և ջրահավաք բույս է դառնում, վորով ամենաչոր տեղերում յերաշտի առաջն առնվում է, իսկ նրա քուսպը անասունների համար լավագույն կերն է հանդիսանում — յեթե նա յուղ իսկ չտար, այլ մենք ստանայինք արևածաղկի քուսպի նման լավ քուսպ, հենց դրա համար արժեք այդ բույսը ցանել: Չե՞ վոր մեր կուխողների և խորհրդային անտեսությունների առջև առաջիկա տարիներում խնդիր է դրված — ավելացնել անասուններերի թիվը տարին 30 — 35% ով և բարձրացնել անասնապահության մյուս արտադրանքները՝ միսը, ճարպը, յուղը, կաթը և այլն:

Այդ տեսակետից յե՛նելով, մեր բոլոր այն շրջանները, վորոնք ցանում են յուղաբույսեր — դառնում են միաժամանակ և անասնապահական — կաթնատնտեսական շրջաններ: Մեր Լոռին, Նոր-Բայազետը, Ախտան, Լենինականի և Սիսիանի շրջանները — յերբ ընդարձակեն արևածաղկի տարածությունները — դրանով նրանք ստեղծած կլինեն անասունների կերի բազա — ուժ տալով միաժամանակ խոտացանությանն ու կերի ճակնդեղի մշակությանը:

Արևածաղիկը մշակության մեջ մտցնելու առավելություններից մյուսն էլ այն է, վոր նա շարքահերկ բույս լինելով, մշակության ժամանակ քաղհանվում է հողը, մեջնակները փոքրացվում են ամառվա ընթացքում մի քանի անգամ — վորով և հողը բարելավում է և մուլախոտերն վոչնչացնելով, զգալիորեն պակասում է նրա սերմերի տարածումը, իսկ ստորյերկրյա ձյուղավորումնե-

րով զարգացող բույսերի մնացորդները հողից դուրս են բերվում և դրանով հողաբաժինը մաքրվում, դառնում է կուլտուրական: Այդ է պատճառը, վոր արևածաղկին հաջորդող բույսը մյուս տարում ունենում է իր համար արդեն մուլախոտերից ազատ տեղ՝ մշակության հարմարագույն վիճակում:

### 3. ԱՐԵՎԱԾԱՂԿԻ ՀՈՂԸ, ՆՐԱ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՊԱՐԱՐՏԱՅՈՒՄԸ

Արևածաղիկը հողի վերաբերմամբ պահանջկոտ չէ, նրա համար լավ են կավաավաղային և ավաղակավային սևահողերը: Միայն խիստ ավաղային հողերն են, վորոնք արևածաղկի համար անպետք են — դրանց մեջ նա բանում է շատ նվազ, ինքը բույսը մնում է վատ զարգացած և դրա հետևանքով էլ տալիս է շատ չնչին բերք:

Վորչափ և արևածաղիկը համեմատաբար չոր հողեր սիրի, սակայն, յերբ նրան ցանում ենք ջրաբքի հողերում կամ այն հողերում, ուր զետերը հեղեղել են և իրենց հետ բերած տիղմի լիցք արել — այդպիսի մարգագետիններում արևածաղիկը զարգանում է շատ ուժեղ և տալիս է մեծ բերք:

Արևածաղկի համար հողը պետք է նախապատրաստել աշնանից: Ահա այդ ժամանակ է, վոր պետք է հողաբաժինը գութաններով խորը վարել և թողնել, վորպեսզի նրա բացած լայն և խոր աղոսների մեջ ամբարվեն թե աշնան անձրևներն և թե ձմեռվա ձյունը, վորոնք անջրտի տեղերի համար փոխարինում են արհեստական վոռոգմանը:

Բացի այդ, ձմեռվա սառնամանիքը քայքայում է կավային հողը, և սառուցի հետ սատկացնում է հողում բուռն դրած միջատների ձվերը, վորոնցից գարնանը դուրս են գալու վորդեր և վնասելու յեն մեր ցանքսը:

Փորձադաշտերի փորձերը ցույց են տվել, վոր աշնանը վարած և գարնանը ցանած արևածաղիկը տվել է հեկտարից 21,8 ցենտներ բերք, այն ինչ գարնանը վարած և ցանած հողերը տվել են հեկտարից 17,1 ցենտներ բերք:

Ինչ վերաբերում է վարի խորությանը—ամենից մեծ բերք ստացվել է միջակ — 12 սանտիմետր խորությամբ արված վարից, իսկ շատ խորը — 25 սանտիմետր, ինչպես և շատ սաղը — 12 սանտիմետր արած վարից ստացվել է քիչ բերք: Համենայն դեպս 14—16 սանտիմետր խորությամբ արած վարը լավագույն խորությունն է արևածաղիկի համար հատկացված վարի վերաբերմամբ:

Գալով պարարտացմանը, արևածաղիկը չի սիրում թարմ գոմաղբ: Թարմ գոմաղբով պարարտացրած հողերի վրա արևածաղիկը շատ է փարթամանում, մեծանում, նրա հասունացումն ուշանում է, վորով և վնասվում է բերքը:

Բազմաթիվ փորձերից պարզվել է, վոր արևածաղիկը սիրում է ֆոսֆորաթթվային պարարտանյութ, վորը բարձրացնելով բերքատվությունը, արագացնում է նրա շուտ աճումը և դրանով բերքատվությունն էլ շուտ է սկսվում:

Նույն փորձերից յերևացել է, վոր հեկտարին մի ցենտներ սուպերֆոսֆարը բերքն ավելացրել է 2,3 ցենտներով:

#### 4. ՑԱՆՔՍԻ ԺԱՄԱՆԱԿՆ ՈՒ ՅԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Բույսի զարգացման, ուրեմն և լավ բերքի նկատմամբ մեծ նշանակութուն ունի արևածաղիկի ցանքսի ճիշտ ժամանակի ընտրությունը և ցանքսի լավ կատարումը. թե վորն է այդ ժամանակը—դա կախված է այն շրջանի կլիմայական պայմաններից, ուր արևածաղիկ մշակվելու յե: Բոլոր փորձերը ցույց են տվել, վոր ընդհանրապես վորքան շուտ է արվել ցանքսը, այնքան արևածաղիկը լավ է զարգացել և մեծ բերք տվել և, ընդհակառակը, ուշացած ցանքսը տվել է քիչ և վատ բերք:

Կուբանի շրջանում, վորն արևածաղիկի կարևոր շրջաններից մեկն է, ապրիլի 1-ին արած ցանքսը տվել է հեկտարից 19 ցենտներ բերք, ապրիլի 15-ին ցանածը 19,4 ցենտներ, 30-ին ապրիլի ցանածը—18,3 ցենտներ, իսկ մայիսի մեջ ցանածները—13—7,4 ցենտներ:

Այս թվերն ինքնին ասում են, վոր այն տեղերում, ուր յեղանակները թույլ են տալիս, հողը ցեխ չէ և, ուրեմն, ուր կարելի յե արդեն ցանքս անել—ավելի ձեռնտու յե կատարել այն շուտ, քան թե մի քանի որով ուշացնել: Յեվ դա բացատրվում է նրանով, վոր սերմը, պատած լինելով հաստ և կարծր կեղևով, վորպեսզի հողի մեջ ուռչի և ծլի, պահանջում է յերկար ժամանակ. ուստի վորքան շուտ ցանենք, այնքան առաջ զցած կլինենք նրա ծլումն ու հետագա զարգացումը:

Սովորաբար ընդունված է — այն շրջաններում, ուր գարնան ցորեն է ցանվում, արևածաղիկը ցանում են ցորենի ցանքսից անմիջապես հետ:

Արևածաղկի ցանքը կատարելու յե լայնաշարք շարքացան մեքենաներով—վորովհետև միայն լայն-լայն թողած շարքերումն և հնարավոր շարքամիջերի մշակութայն աշխատանքները լրիվ կերպով կատարել:

Ներկայումս, յերբ արևածաղիկ մշակելու շրջաններում ևս կազմակերպված են կոլխոզներ և հողագործական ընկերություններ, սրանք կատարյալ հնարավորություն ունեն իրենց ցանքան անելու շարքացան մեքենաներով, դնելով հողի մշակութայն աշխատանքները լավագույն պայմանների մեջ—այն է՝ տրակտորներով անել աշնան հերկ, ցանքը սկսել իր ժամանակին և ցանել լավ սերմերով և անպայման շարքացան մեքենաներով:

Ս ե ռ մ ա ց ու լ ի ը ն տ ր ու թ յ ու ն ը պ ե տ ք ե կ ա տ ա ռ ե լ ամենամեծ խնամքով, ընտրելով զրա համար խոշոր և ծանր սերմերը, հեռացնելով սերմացուի միջից թեթև, փուչ, աղտոտ, կերված ու ծակոտած սերմերն ու աղբի խառնուրդները:

Ս ե ռ մ ա ց ու ն ա վ ե լ ի ն պ ա ս տ ա վ ո Ր պ ա յ մ ա ն ն ե ռ ե գ ա տ ն ու մ իր ծրման համար, յերբ նա ցանվում է 10—13 սանտիմետր խորության մեջ, դրանից ավելի խոր և կամ ավելի սաղը ցանված սերմերն, ինչպես ցույց են տվել փորձերը, ավել են ավելի օրհնվում:

Մ ի հ ե կ ա տ ա ռ ի ն շ ա ռ ք ա ց ա ն մ ե ճ ե ն ա յ ո Վ ց ա ն վ ե լ ու յ ե 8—15 լիլոգրամ սերմ: Սերմի քանակը կարելի յե հարմարեցնել նախապես մեքենայով փորձնական ցանք անելով հողի վրա և ըստ այն սերմնատար խողովակների միջով անցնող մեքենայի մասերը կարգավորելով:

Ի ն չ խ ո ս ք, վ ո Ր վ ն ա ս և վ ո Ր պ ե ս շ ա տ խ ի տ, ա յ ն պ ե ս և շ ա տ ն ո ս ը ց ա ն ք ը, ա ու ջ ի ն ի դ ե պ ճ ու մ բ ու յ ս ը ու շ ե հ ա ս

ն ու մ, բ ո յ և ք շ ու մ, ի ս կ յ ե ռ դ կ ո Ր դ դ ե պ ճ ու մ ք ի չ բ ե ռ ք և ս տ ա ց վ ու մ: Շ ա տ հ ա Ր ու ս ու պ ա Ր ա Ր ա հ ո ղ ե Ր ու մ պ ե տ ք ե ց ա ն ե լ ն ո ս ը, ի ս կ հ ա մ ե մ ն ա տ ա Ր ա ա վ ե լ ի ք ի չ պ ա Ր ա Ր ա հ ո ղ ե Ր ու մ՝ ի Ր ա Ր մ ու-մ ո ս:

Յ ե թ ե ս ե Ր մ ը ց ա ն վ ու մ ե ա Ր դ ե ն չ ո Ր ա ց ա ծ հ ո ղ ի մ ե ջ—այդ դեպքում անհրաժեշտ է ծանր գլաններով հողը գլանել: Սյդպիսով հողի մասնիկներն մոտենում են իրար և նրանց ցածից դեպի վերի շերտերն և բերում հողի ներքին շերտում գտնված խոնավությունը: Յեթե գլան չկա—կարելի յե հողի վրա բանեցնել նաև փայտե կամ յերկաթե թեթև փոցխեր:

Կ Ր ու լ ի կ ի փ ո Ր ձ ն ա կ ա ն կ ա յ ա ն ու մ շ ա ռ ք ա ց ա ն մ ե ճ ե ն ա ն ն ե Ր ո Վ ա Ր վ ա ծ ց ա ն ք ս ե Ր ի ց ա մ ե ն ի ց մ ե ծ բ ե Ր ք ս տ ա ց վ ե լ ե, յ ե Ր ք շ ա Ր ք ը-շ ա Ր ք ի ց ց ա ն վ ա ծ ե յ ե ղ ե լ 58 սանտիմետր հեռավորության վրա, իսկ բույսը բույսից յեղել է 36 սանտիմետր, այս դեպքում հեկտարը տվել է 21,6 ցենտներ բերք, իսկ ավելի խիտ ցանքները տվել են 15—16 ցենտներ: Սյդ փորձերն ապացուցել են, վոր լավագույնը համարելու յե, յերը շարքերի հեռավորությունը լինում է 53—58 սանտիմետր, իսկ բույսը-բույսից շարքի մեջ՝ 36—44 սանտիմետր:


Ա յ ն ե լ պ ե տ ք ե ու ն ե ն ա լ ա չ ք ի ա ո ա ջ, վ ո Ր խ ո շ ո Ր ս ե Ր մ ե Ր ը ց ա ն ե լ ու յ ե մ ե ծ հ ե ո ա վ ո Ր ու թ յ ա ն վ Ր ա, ի ս կ մ ա ն ը ս ե Ր մ ե Ր ը՝ ա վ ե լ ի փ ո թ ը հ ե ո ա վ ո Ր ու թ յ ա ն:

### 5. ԱՐԵՎԱԾԱՂԿԻ ԽՆԱՄՔԸ ԲՈՒՍՆԵՆՈՒՅ ՇԵՏՈ

Արևածաղկի խնամքը նրա բանելուց հետո կայանում է հետևյալներում՝ նոսրացում խիտ բուսած արևա-

ծաղկի, քաղհան թե բույսի շուրջը—շարքերում, և թե շարքերի մեջ բուսած մոլախոտերի, և հողի փուխրացում:

Նոսրացումը բույսի զարգացման ամբողջ ժամանակ կատարվում է յերկու անգամ. մեկ՝ յերբ արևածաղկի մատղաշ բույսը դարձել է 6—8 սանտիմետր, յերկրորդը, յերբ նա ունի 4—5 զույգ տերևներ:



Նկար 2. Չնոսրացրած (ճախում) արևածաղկի, նոսրացրած (աշխ) արևածաղկի:

Նոսրացման նպատակն է՝ ավելորդ բուսած արևածաղկի բույսերից դուրս հանել նրանք, փորոնք կարող են

խանգարել թողած բույսի ազատ զարգացմանը և այդպիսով վերջինը դնել աճման և պնման լավագույն պայմանների մեջ: Դրա համար թողնելով 18—25 սանտիմետրի վրա մի-մի ամենից լավ բուսած արևածաղիկը, մյուսները պոկում են արմատներով և դուրս տանում շարքերի միջից: Հետևյալ անգամ նոսրացնելիս դուրս են հանում մեջ ու մեջ, թողնելով իրարից 35×55 սանտիմետրի վրա. սրանք ել մնում են արտում մինչև հասնելը:



Նկար 3. Արևածաղկի դաշտը առաջին նոսրացումից և քաղհանից հետո:

Նոսրացումից հետո քաղհանում են և հողը փուխրացնում: Փուխրացրած հողի մեջ թողած բույսերն աճում են՝ զվարթ և ուժեղ, խոնավությունը զրանով հողում խնայվում է, ճյուղերն ու տերևները սկսում են նոր թափով զարգանալ — փորի հետևանքով ավելանում է արևածաղկի բերքը (տես նկար 2):



Փորձա-կայանների այդ ուղղությամբ կատարած փոր-  
 ձերն ապացուցել են, վոր մինչդեռ չփուխրացրած հողի մի  
 հեկտարից ստացվել է 16,6 կիլոգրամ բերք, փուխրա-  
 ցրածի մի հեկտարը տվել 20,3 ցենտներ:



Նկ. 4. Արևածաղկի  
 երբ վրա հազ-  
 րած գլուխների  
 չորացնելը:

Յերկրորդ նոսրացումի ժամանակ արե-  
 վածաղիկն այնքան մեծացած է լինում, վոր  
 շարքի միջի բույսերն սկսում են իրարու  
 հասնել—և ահա վորպեսզի մոտ-մոտ բույ-  
 սերը միմյանց չփնասեն, սովեր չզցեն, իրար  
 սնունդը չվերցնեն, արվում է յերկրորդ  
 նոսրացումը (տես նկար 3): Յեթե թե  
 առաջին և թե յեկրորդ նոսրացումը ուշա-  
 նում են—դա զգալի կերպով ազդում է  
 բերքի վրա: 7—8 որ ուշացումը նույն իսկ  
 մեծ տոկոսով պակասեցնում է բերքի քա-  
 նակը: Շարքամիջերի հողի փուխրացում  
 անում են ձեռքի, ձիու կամ տրակտորի  
 փուխրացնող մեքենաներով, այսպես կոչված  
 «Պլանետ»-ներով:

Սարատովի փորձակայանի տվյալներով մի հեկտարից  
 ստացվել է բերք:

Առանց շարքամիջերի փուխրացման 8,3 ցենտներ:

ձեռքի 2 անգամ փուխրացումով 11,4 »

ձիու 1 » » 10,3 »

Բայց, հենց վոր բողազները լցվել են, բերքը պա-  
 կասել է 3,1 ցենտներով:

Յերեք անգամվա փուխրացումը վոչ միայն բերքը չի  
 ավելացրել, այլ պակասեցրել է:

Մրանից յերևում է, վոր արևածաղիկը չի սիրում  
 հողի չափից դուրս փուխրացում, այլ չափավոր՝ յերկու  
 անգամվա:

## 6. ԱՐԵՎԱԾԱՂԿԻ ԲԵՐՔԱՆՎԱԿԸ

Արևածաղիկը հասնելուց հետո սկսվում է նրա բերքա-  
 հավաքը, վորի լավագույն ձևն այն է, վոր սուր ման-  
 գաղներով կտրատեն նրա հասած գլուխները 55—75 սան-  
 տիմետր ցողունի բարձրության վրա և ցողունների վրա  
 հազցնեն կտրած գլուխները (տես նկար 4), Հազցնում են  
 սերմերը դեպի ներքև, և միայն ամենից ցածինն է, վոր  
 հազցնում են սերմերը դեպի վեր: Յերբ գլուխները այս  
 յեղանակով շարելուց հետո արևածաղիկը չորանում է—  
 այժմ կտրում են ցողունները նրանց վրա շարված գլուխ-  
 ներով, լցնում են սայլերի մեջ, վորոնց տակին պետք է  
 փռել մեզար, շոր և այլն—վորպեսզի միջից թափվելու  
 և բերքի կորուստ ունենալու առաջն առնենք:

Պարզ է, վոր բերքը ժողովելիս ամենից խոշոր, լիքը  
 և լավ հասած գլուխները շոկում են վորպես սերմացու՝  
 նրանց պահելու հաջորդ տարվա համար:

Լավ հասած համարվում են այն գլուխները, վորոնք  
 դեղնել են, ցած կուացել և վորոնց մեջը լիքն է սերմե-  
 րով: Լավ սերմացու ստացվում է, յերբ մի քանի տարի  
 շարունակ ընտրում ենք ամենից լավ գլուխները և ահա  
 դրանց սերմերն է վոր ցանում ենք, այդպիսով սերմացուն  
 լավացրած ենք լինում մասսայորեն:

Ժողոված ու չորացած գլուխներն այնուհետև կալ են անում և կամերով կամ անասունների վոտքերով ծեծում ու քամհարում:

## 7. ՎՈՐ ՏԵՍԱԿ ՍԵՐՄԵՐԸ ՊԵՏՔ Ե ՑԱՆԵԼ

Պարզ ե, վոր ամենից շատ և ամենից լավ բերք ստացվում ե միայն այն սերմերից, վորոնք ձեռք են բերված մաքրատեսակ սերմ բուծանող սելեկցիոն կայաններից կամ հատուկ սերմնաբուծարաններից:

Այսպիսի սերմնաբուծարաններ կարող են հիմնել նաև մեր կոլխոզները— դրա համար նրանք գործի կազմակերպությունը պետք ե հանձնեն մասնագետ սելեկցիոնների, վորը և, համաձայն գիտության պահանջների, կտանի սերմնահանության աշխատանքները, և այդպիսով մի սերմնաբուծական կոլխոզ կարող ե ամենաընտիր սերմեր մատակարարել մյուս, հարևան այն կոլխոզներին, վորոնք կպարսպեն արևածաղկի մշակությամբ:

## 8. ԱՐԵՎԱԾԱՂԿԻ ՄՇԱԿՈՒՅՅԱՆ ԱԳՐՈՄԻՆԻՄՈՒՄԸ

Կուլտուրական թանգարժեք մյուս բույսերի պես արևածաղիկն ունի իր ագրոմինիմումը:

Դա կայանում ե հետևյալ կանոնների պահպանման մեջ:

1. Արևածաղիկ ցանելու համար հատկացվում ե աշանից հերկած հողամաս:

2. Ցանքսը կատարվում ե գարնանը հնար յեղածին չափ վաղ:

3. Ցանելու յե բացառապես արևածաղկի սելեկցիոն տեսակները:

4. Ցանքսն անել շարքացան մեքենաներով— շարքը շարքից 35—55 սանտիմետրի վրա:

5. Շարքերում բույսը բույսից թողնել 35—45 սանտիմետր հեռավորությամբ:

6. Չուշացնել նոսրացման և փուխրացման աշխատանքները:

7. Առաջին նոսրացումն ու փուխրացումն անել, յերբ բույսը կունենա յերկու զույգ տերևներ:

8. Յերկրորդ նոսրացումն ու քաղհանն անել առաջինից մոտավորապես յերկու շաբաթ հետո:

9. Միմյանց յետևից նույն հողի վրա արևածաղիկ չցանել, այլ սահմանել կանոնավոր բազմամյա ցանքսաշրջան:

10. Արևածաղկի ցողունները չորացնել և այրել արտում— մոխիրը ցրելով արտի մեջ:

11. Մտցնել հողի մեքենաներով մշակության յեղանակը— այդ նպատակով կազմելով կոլխոզներ կամ մտնելով յեղած կոլխոզների մեջ:

## 9. ԱՐԵՎԱԾԱՂԿԻ ԿՈՆՏՐԱԿՏԱՑԻԱՆ

Գյուղացիական տնտեսության վերակառուցման գործում կարևորագույն միջոցներից մեկը հանդիսանում ե բոլոր տեսակ ցանքսերի, դրանց թվում և արևածաղկի ցանքսի, կոնտրակտացման լայն տարածումը:

Կոնտրակտացման միջոցով այն կազմակերպությունը, վորը մթերում ե արևածաղիկ — նա նախապես պայման ե

կնքում այս կամ/այն կոլխոզի, սրանց միություններին հետ՝ թե ի՞նչ քանակությամբ բերք պետք է նրանք տան իրան:

Դրանով արևածաղիկ ցանող կոլխոզն ապահովված է, վոր իր բերքը չի մնալու առանց վաճառքի կամ չի ընկնելու մասնավոր սպեկուլյանտի ձեռքը, այլ նա, վորոչ գնեցրով ու պայմաններով, տալու յե ամբողջ բերքը պետական հաստատությանը:

Ցանքս անելու ծախքերի համար գնող մարմինը տալիս է կոլխոզին կամ նրանց միությանը վորոչ կանխավճար, սերմացու, մեքենաներ ու գործիքներ, պահում է հրահանգիչ—ագրոնոմ, դրամի փոխարեն տալիս է եժան գներով արդյունաբերական ապրանքներ և այլն, պայմանով, վոր ցանողը լրիվ կատարի այն ցուցմունքները, վոր անում է գնող կազմակերպությունը:

Յեւ վորովհետև կոնտրակտացիան հնարավորություն է տալիս ցանքս անել մեծ տարածությունների վրա, ընտրովի սերմերով, ագրոնոմիական բոլոր կատարելագործված յեղանակներով, դրա համար ել բերքատվությունը լինում է բարձր, ստացված մթերքը լավորակ, ուրեմն և նրա վրա թափված աշխատանքը լիովին վարձատրված: Մանավանդ նա ձեռնառու յե չքավոր-միջակ տնտեսությունների և դրանց միացյալ կոլխոզների համար:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
Արևածաղիկն ու նրա մշակության շրջանները . . . . .	3
Արևածաղիկի նշանակությունը . . . . .	5
Արևածաղիկի հողն ու նրա մշակությունը և պարարտացումը . . . . .	7
Ցանքսի ժամանակն ու յեղանակները . . . . .	9
Արևածաղիկի խնամքը բուսնելուց հետո . . . . .	11
Արևածաղիկի բերքահավաքը . . . . .	15
Վոր տեսակի սերմերը պետք է ցանել . . . . .	16
Արևածաղիկի մշակության ագրոմիսիումը . . . . .	16
Արևածաղիկի կոնտրակտացիան . . . . .	17



5 407.

9650

19.936  
Цена 5 коп.  
С. X. 9.



---

---

**Воздeльвание  
подсолнуха**

Сост. А. Атанасян  
(По Панфилову)

---

---

**На армянском языке**

---

---

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СССР.  
Москва, центр, Никольская, 10.